

## ՀԱԳՄՉ 12.10

Առաջին հրատարակություն  
23 դեկտեմբերի 2003թ.  
Ներառում է փոփոխություններ 1, 2 և 3-ը

---

## Ականների վտանգի մասին իրագրելի ման ծրագրերի և նախագծերի պլանավորում

---

---

Տնօրեն,  
ՄԱԿ-ի Ականագրերի մասնաճյուղ (ՄԱԿԱՄ),  
2 United Nations Plaza, DC2-0650  
New York, NY 10017  
USA

Էլ. Փոստ՝ [mineaction@un.org](mailto:mineaction@un.org)  
Հեռախոս՝ (1 212) 963 1875  
Ֆաքս՝ (1 212) 963 2498  
Կայքէջ՝ [www.mineactionstandards.org](http://www.mineactionstandards.org)

## Նախագրուշացում

Սույն փաստաթուղթն ուժի մեջ է մտել կազմի վրա նշված ամսաթվից: Քանի որ Հակասականային գործողությունների միջազգային չափորոշիչները (ՀԱԳՄՉ) պարբերաբար վերանայվում և թարմացվում են, դրանից օգտվողները պետք է այցելեն ՀԱԳՄՉ ծրագրի կայքէջը վերջինիս կարգավիճակը ստուգելու նպատակով (<http://www.mineactionstandards.org/> կամ ՄԱԿԱԾ կայքէջ հետևյալ հասցեով՝ <http://www.mineaction.org>):

## Հեղինակային իրավունք

ՄԱԿ-ի սույն փաստաթուղթը Հակասականային գործողությունների միջազգային չափորոշիչ է (ՀԱԳՄՉ) և սեփականության իրավունքով պաշտպանված է ՄԱԿ-ի կողմից: Ոչ սույն փաստաթուղթը, ոչ էլ դրա որևէ հատված չի կարելի վերարտադրել, պահել կամ որևէ այլ միջոցով, կամ ձևով փոխանցել որևէ այլ նպատակի համար՝ առանց ՄԱԿ-ի անունից գործող ՄԱԿԱԾ-ի կողմից նախապես գրավոր համաձայնություն ձեռք բերելու:

Սույն փաստաթուղթը ենթակա չէ վաճառքի:

Տնօրեն  
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ)  
2 United Nations Plaza, DC2-0650  
Նյու Յորք, NY 10017  
ԱՄՆ

Էլ-փոստ՝ mineaction@un.org  
Հեռախոս՝ (1 212) 963 1875  
Ֆաքս՝ (1 212) 963 2498

## Բովանդակություն

Բովանդակություն .....	iii
Նախաբան .....	iv
Ներածություն .....	v
Ականների վտանգի մասին իրազեկման ծրագրերի և նախագծերի պլանավորում .....	1
1. Ծավալ.....	1
2. Փաստաթղթեր .....	1
3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ .....	1
4. Պլանավորում .....	2
5. Ընդհանուր պահանջներ .....	3
6. Ականների վտանգի մասին իրազեկման (ԱՎԻ) տարբեր միջոցառումների պլանավորում	3
6.1. Հանրության համար տեղեկատվության տարածման միջոցառումների պլանավորում .....	4
6.2. Կրթման և վերապատրաստման միջոցառումների պլանավորում .....	5
6.3. Ականազերծման գործողությունների վերաբերյալ համայնքների հետ հաղորդակցման պլանավորում .....	6
7. Ուղղորդող սկզբունքներ .....	7
7.1. Շահառուների ներգրավում.....	7
7.2. Համակարգում .....	7
7.3. Ինտեգրում .....	7
7.4. Համայնքների մասնակցություն և լիազորություն.....	8
7.5. Տեղեկատվության կառավարում և փոխանակում .....	8
7.6. Պատշաճ ուղղվածություն .....	9
7.7. Կրթում .....	11
7.8. Վերապատրաստում .....	12
8. Պարտավորություններ .....	12
8.1. Միացյալ ազգերի կազմակերպություն .....	12
8.2. Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ) .....	12
8.3. ԱՎԻ կազմակերպություն .....	13
8.4. Դոնորներ.....	13
Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր.....	14
Հավելված Բ (Տեղեկատվական) Տերմիններ, սահմանումներ և հապավումներ .....	15
Փոփոխությունների գրանցում .....	21

## Նախաբան

Մարդասիրական հակաականային ծրագրերի միջազգային չափորոշիչները առաջին անգամ առաջարկվել են 1996թ. հուլիսին Դանիայում տեղի ունեցած միջազգային տեխնիկական գիտաժողովի աշխատանքային խմբերի կողմից: Չափորոշիչներ են սահմանվել ականազերծման բոլոր ասպեկտների համար, չափանիշեր են առաջարկվել և համաշխարհային նոր սահմանում է տրվել «ականազերծում» գաղափարին: 1996թ վերջում Դանիայում առաջարկված սկզբունքները զարգացվել են ՄԱԿ-ի կողմից անցկացվող ժողովի աշխատանքային խմբի կողմից և մշակվել են Մարդասիրական ականազերծման գործողությունների միջազգային չափանիշերը: Առաջին հրատարակությունը տպագրվել է ՄԱԿ-ի ականազերծման ծառայության (ՄԱԿԱԾ) կողմից 1997թ. մարտին:

Այս նախնական չափորոշիչների ծավալները այդ ժամանակից ի վեր ընդլայնվել են՝ ներառելու հակաականային գործողությունների այլ բաղադրիչներ և արտացոլելու գործողությունների, գործընթացների, գործելառճերի և նորմերի հետ կապված փոփոխությունները: Չափորոշիչները վերամշակվեցին և վերանվանվեցին որպես Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչներ (ՀԱԳՄՉ), որի առաջին հրատարակությունը լույս տեսավ 2001թ. հոկտեմբերին:

ՄԱԿ-ն ընդհանուր պարտավորություններ ունի ականային ծրագրերի արդյունավետ կառավարումը խրախուսելու և կյանքի կոչելու համար, որը ներառում է չափորոշիչների մշակումն ու պահպանումը: Այդ պատճառով ՄԱԿԱԾ-ը ՄԱԿ-ում տեղակայված այն գրասենյակն է, որը պատասխանատու է ՀԱԳՄՉ-ի մշակման և պահպանման համար: ՀԱԳՄՉ ստեղծվում է Ժնևի Մարդասիրական ականազերծման միջազգային կենտրոնի աջակցությամբ:

ՀԱԳՄՉ-ն պատրաստելու, վերանայելու և վերափոխելու աշխատանքը իրականացվում է տեխնիկական հանձնաժողովների կողմից միջազգային, կառավարական և հասարակական կազմակերպությունների օժանդակությամբ: Յուրաքանչյուր չափորոշիչի ամենավերջին տարբերակը, տեխնիկական հանձնաժողովների կատարած աշխատանքի հետ միասին կարելի է գտնել <http://www.mineactionstandards.org> կայքում: Առանձին ՀԱԳՄՉ-ները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ արտացոլելու հակաականային գործողության զարգացող նորմերն ու պրակտիկան և միջազգային կանոնակարգերի և պահանջների շարքում ներառելու կատարվող փոփոխությունները:

## Ներածություն

Պլանավորումն այն եղանակն է, որի միջոցով Ականների վտանգի մասին իրազեկման (ԱՎԻ) ծրագրեր և նախագծեր իրականացնելու ցանկություն ունեցող կազմակերպություններն սահմանում են նպատակային բնակչության համար ականների և Պատերազմի պայթուցիկ մնացորդների (ՊՊՄ) կողմից պատճառած վնասների ռիսկի նվազեցման առավել արդյունավետ եղանակը՝ բարձրացնելով իրազեկության մակարդակը և խթանելով վարքագծի փոփոխությունը:

Պլանավորումը կարևոր է գործունեության արդյունավետ իրականացման համար և պետք է հիմնված լինի ականներ ունեցող համայնքների կարիքների մանրակրկիտ և շարունակական գնահատումների վրա: Պլանավորումը պետք է սահմանի, թե ինչպես պետք է իրականացվի ծրագրի կամ նախագծի վերահսկումը և գնահատումը:

ԱՎԻ պլանավորումը պետք է իրականացվի ականազերծման գործողությունների ազգային ծրագրին և տարեկան պլան(ներ)ին օժանդակելու նպատակով, կամ կապված լինի նրա զարգացման հետ այն դեպքերում, երբ ծրագիրը և պլանները դեռևս պետք է մշակվեն: Պլանավորումը պետք է նաև կապված լինի համայնքային զարգացման նախաձեռնությունների հետ:

ԱՎԻ կազմակերպությունների հավաստագրումն սովորաբար կախված կլինի արդյունավետ պլանավորման և կառավարման նրա ցուցաբերած ունակությունից:

## Ականաների վտանգի մասին իրազեկման ծրագրերի և նախագծերի պլանավորում

### 1. Ծավալ

Սույն չափորոշիչն ուղղություններ է տրամադրում ականաների վտանգի մասին իրազեկման (ԱՎԻ) ծրագրերի և նախագծերի պլանավորման համար: Այն չի ներկայացնում այն կոնկրետ մանրամասները, որոնք պետք է ներառված լինեն պլանի մեջ, այլ ներկայացնում է տարբերակների մի լայն ամբողջություն, որը պետք է դիտարկվի պլանավորման փուլի ընթացքում:

### 2. Փաստաթղթեր

Հավելված Ա-ում բերված է նորմատիվ փաստաթղթերի ցանկը: Նորմատիվ հղումները կարևոր փաստաթղթեր են, որոնց հղում է կատարվում սույն չափորոշիչում և որոնք կազմում են սույն Ուղենիշի դրույթների մի մասը:

### 3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքում «պետք է», «հարկավոր է» և «կարող է» բառերն օգտագործված են համապատասխանության նախատեսված մակարդակը ցույց տալու նպատակով: Այդ կիրառումը համապատասխանում է ISO չափորոշիչների և ուղենիշների լեզվի հետ:

ա) «պետք է» կիրառվում է ցույց տալու համար այն պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները, որոնք պետք է ընդունվեն չափորոշիչին ամբողջությամբ բավարարելու համար.

բ) «հարկավոր է» օգտագործվում է նախընտրելի պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները ցույց տալու համար.

գ) «կարող է» օգտագործվում է գործողության հնարավոր մեթոդը կամ ընթացքը ցույց տալու համար:

‘Ականաների վտանգի մասին իրազեկում’ (ԱՎԻ) վերաբերում է այն գործողություններին, որոնք ուղղված են ականաների/Պատերազմի պայթուցիկ մնացորդների (ՊՊՄ) հետևանքով առաջացող վնասների ռիսկի նվազեցմանը՝ բարձրացնելով իրազեկության մակարդակը և խթանելով վարքագծի փոփոխությունը, ինչպես նաև իրականացնելով հանրության համար նախատեսված տեղեկատվության տարածումը, կրթումը և վերապատրաստումը և ականազերծման գործողությունների վերաբերյալ համայնքների հետ հաղորդակցումը:

“ԱՎԻ կազմակերպություն” տերմինը վերաբերում է ցանկացած կազմակերպությանը, ներառյալ պետական, հասարակական, քաղաքացիական կազմակերպություններին (օր.՝ կանանց միավորումներ, երիտասարդական կազմակերպություն, կարմիր խաչը և կարմիր մահիկի կազմակերպությունները), առևտրային միավորներին և ռազմական ոլորտի աշխատակիցներին (ներառյալ խաղաղություն պաշտպանող ուժերը), որոնք պատասխանատու են ԱՎԻ ծրագրեր կամ առաջադրանքներ իրականացնելու համար: ԱՎԻ կազմակերպությունը կարող է հանդես գալ որպես հիմնական կապալառու, ենթակապալառու, խորհրդատու կամ գործակալ:

“ԱՎԻ ստորաբաժանում” տերմինը վերաբերում է կազմակերպության առանձին անվանում ունեցող մի բաղադրիչին, որը հավաստագրված է մեկ կամ մի քանի հանձնարարված ԱՎԻ միջոցառումներ իրականացնելու համար, ինչպիսիք են հանրային տեղեկատվության տարածման ծրագրի, դպրոցներում իրականացվող կրթման ծրագրի կամ հակաականային գործողությունների վերաբերյալ համայնքների հետ հաղորդակցման ծրագրերի գնահատումը:

‘Ականազերծման գործողությունների ազգային մարմին’ (ԱԳԱՄ) տերմինը վերաբերում է ականներ ունեցող բոլոր այն երկրների պետական վարչություններին, կազմակերպություններին կամ հաստատություններին, որոնք պարտավոր են կարգավորել, կառավարել և համակարգել ականազերծման գործողությունները: Դեպքերի մեծ մասում Ականազերծման գործողությունների ազգային կենտրոնը (ԱԳԱԿ) կամ դրան համարժեք հաստատությունը հանդես է գալիս որպես ԱԳԱՄ կամ գործում է նրա անունից: Որոշ իրավիճակներում և որոշակի պահերին ՄԱԿ կամ այլ ճանաչված միջազգային մարմնի համար կարող է անհրաժեշտ և պատշաճ լինել ստանձնել ԱԳԱՄ որոշ կամ բոլոր պարտականությունները և իրականացնել որոշ կամ բոլոր գործառնությունները: Նման դեպքերում ՄԱԿ պետք է համապատասխան տեխնիկական աջակցություն ցուցաբերի, որը կներառի պատշաճ կերպով որակավորված աշխատակիցներին, ովքեր փորձ ունեն ԱՎԻ ոլորտում:

‘Նախագիծ’ տերմինը վերաբերում է մի միջոցառմանը կամ համակցված միջոցառումների շարքին, որոնք ունեն համաձայնեցված նպատակ: Սովորաբար նախագիծն ունենում է սահմանափակ տևողություն և աշխատանքային ծրագիր: Նպատակին հաջողությամբ հասնելու համար անհրաժեշտ ռեսուրսներն սովորաբար սահմանվում և համաձայնեցվում են նախքան ծրագրի մեկնարկը:<sup>1</sup>

‘Ծրագիր’ տերմինը վերաբերում է կազմակերպության միջին կամ երկարաժամկետ միջոցառումներին, որոնք ուղղված են նրա տեղական կամ ռազմավարական նպատակների իրականացմանը: Հակաականային գործողությունների ծրագիրը բաղկացած է լինում հակաականային գործողությունների՝ միմյանց հետ կապված ծրագրերից: Նմանապես, ԱՎԻ ծրագիրը բաղկացած է լինում միմյանց հետ կապված ԱՎԻ ծրագրերի շարքից:

Սույն չափորոշիչում կիրառված տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը բերված է Հավելված Բ-ում: ՀԱԳՄՉ-ում կիրառված բոլոր տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը բերված է ՀԱԳՄՉ 04.10-ում:

#### 4. Պլանավորում

ԱՎԻ համար նախագծի պլանավորման նպատակն է սահմանել նախագծի նպատակները և խնդիրները և կազմել *գործողությունների ծրագիրը*՝ այդ նպատակների և խնդիրների ապահովման համար: Տեղեկացված պլանավորումը պետք է հնարավորություն տա կազմակերպությանը իրականացնել ԱՎԻ միջոցառումներն արդյունավետ և գործուն կերպով՝ նպատակային խմբերի կարիքներին համաձայն:

Բոլոր շահառուները պետք է հնարավորինս ներգրավված լինեն պլանավորման գործընթացում: Ծրագրի նպատակները, խնդիրները և միջոցառումները պետք է արտացոլեն նրանց մասնակցությունը գնահատման և պլանավորման փուլերում:

1. Հակաականային գործողությունների ժամանակ նպատակի սահմանման մեթոդը, նպատակին հասնելու միջոցները և անհրաժեշտ ռեսուրսների սահմանումը սովորաբար ներկայացվում են ‘ծրագրի առաջարկում’ կամ ‘ծրագրային փաստաթղթում’:

Ծրագրի պլանավորման համար տեղեկատվությունը պետք է ստացվի և պլանավորումը պետք է իրականացվի ակնազերծման գործողությունների ազգային պլանի համաձայն՝ վերջինիս առկայության դեպքում: Սա մի գործընթաց է, որը կառավարիչներից պահանջում է համաձայնել իրենց նախագծի կոնկրետ նպատակների վերաբերյալ՝ սահմանելու և գնահատելու համար այս նպատակներին հասնելու այլընտրանքային ուղիները և ընտրելու համար առաջընթացի առավել հարմար ուղին:

Պլանավորումը կատարվում է իրականացումից առաջ: Սակայն անհրաժեշտ է պարբերաբար վերանայել պլանը՝ նախագիծն իր կատարման իրականությանը համապատասխանեցնելու նպատակով: Սա իրականացվում է որպես ԱՎԻ ծրագրի մի մաս՝ վերահսկման և գնահատման միջոցով, և գծապատկերի տեսքով ներկայացված է Հավելված Գ-ում:

Պլանավորման փուլում անհրաժեշտ է սահմանել վերահսկման և գնահատման համակարգը և որոշել համապատասխան ցուցանիշները:

## 5. Ընդհանուր պահանջներ

Պլանավորման ցանկացած գործընթաց ներառում է ծրագրի կամ նախագծի ընդհանուր նպատակների սահմանումը, և այնուհետև կոնկրետ նպատակների և դրանց հասնելու միջոցառումների շարքի որոշումը: Յուրաքանչյուր միջոցառում պետք է նպաստի որոշակի նպատակին հասնելուն, և պլանավորված յուրաքանչյուր միջոցառման համար պետք է հստակորեն նշվեն, թե ինչ ներդրումներ (ռեսուրսներ) են պահանջվում և ինչ արդյունքներ են ակնկալվում: Չափման ենթակա ցուցանիշները և նրանց հաստատման աղբյուրները պետք է սահմանվեն յուրաքանչյուր նպատակի ապահովումը գնահատելու նպատակով:

Նման տրամաբանական կերպով նախագծերի պլանավորումը հնարավորություն է տալիս կազմակերպություններին մանրամասն դիտարկել յուրաքանչյուր միջոցառում իրականացնելու պատճառները և որոշել յուրաքանչյուր արդյունքին հասնելու համար անհրաժեշտ ներդրումները: Միջոցառումները, ներդրումները և արդյունքները կարող են ստուգվել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին վերահսկման ընթացակարգերի միջոցով: Սահմանված նպատակները և գործունեությունն ու այդ նպատակներին հասնելու մակարդակի չափման ցուցանիշները պետք է ընկած լինեն գնահատման հիմքում:

Նման տրամաբանական պլանավորման մոտեցում իրականացնելու մեկ եղանակ է տրամաբանական հիմքերի վերլուծությունը: Այս մոտեցումը թույլ է տալիս իրականացնել պլանավորված միջոցառումների հստակ ներկայացումը (կառուցվածքային ֆորմատով) համապատասխան շահառուներին:

## 6. Ակաների վտանգի մասին իրազեկման (ԱՎԻ) տարբեր միջոցառումների պլանավորում

ԱՎԻ պլանը պետք է.

- ա) ինտեգրված լինի ակնազերծման գործողությունների ազգային ռազմավարության և ազգային մարդասիրական ու զարգացման ընդհանուր ռազմավարությունների մեջ,
- բ) արտացոլի ներգրավված կազմակերպությունների և մարդկանց գերակայությունները (ինչպիսիք են կառավարությունը, դոնորները, համայնքները, կանայք, երեխաները, փոքրամասնությունները, գյուղերի ակնազերծողները և հաշմանդամություն ունեցող մարդիկ),



- զ) արտացոլի ականների և ՊՊՄ-ների կողմից բնակչությանը սպառնացող ռիսկերի բնույթը: Արդյոք վտանգի գերակշռող մասը գալիս է ականներից, ՊՊՄ-ներից, թե երկուսից միասին,
- դ) հաշվի առնի միջոցառումների հետևանքով առաջացած ցանկացած բացասական կողմնակի ազդեցության ռիսկը,
- ե) լինի ընդունելի,
- զ) հիմնված լինի հաղորդակցման համապատասխան միջոցների վրա,
- է) հնարավորության դեպքում ծրագրի, նախագծման, իրականացման և վերահսկման մեջ ներառի նպատակային շահառուներին,
- ը) հիմնվի այլ ԱՎԻ ծրագրերից քաղված դասերի վրա,
- թ) հեռու լինի քաղաքային և սեռական և այլ ուղղվածություններից,
- ժ) սահմանի դոնորներին հաշվետվություններ ներկայացնելու հստակ ընթացակարգերը և կառուցվածքը,
- ի) լինի կայուն, այսինքն ներառի ներուժի զարգացումը և կրթումը,
- լ) լինի ճկուն և հարմարվողական,
- խ) սահմանի ծրագրի առաջընթացի և ազդեցության չափման ցուցանիշները,
- ծ) սահմանի վերահսկման և գնահատման պատշաճ համակարգերը,
- կ) լինի իրատեսական և հաշվի առնի ծրագրի ներդրումները, ինչպիսիք են տեղական և արտաքին կառավարչական ներուժը և անձնակազմի, ունակությունների և ռեսուրսների առկայությունը, և
- հ) ապահովի պատշաճ ֆինանսավորումը և նյութատեխնիկական աջակցությունը:

Մինչդեռ ցանկացած ԱՎԻ ծրագրի կամ նախագծի պլանավորման համար կիրառվում են ընդհանուր պահանջներ, կոնկրետ միջոցառումների համար կարող են կիրառվել յուրահատուկ պահանջներ: Դրանք առավել մանրամասն բերված են ստորև:

#### **6.1. Հանրության համար տեղեկատվության տարածման միջոցառումների պլանավորում**

Հանրության համար տեղեկատվության տարածումը ներառում է զանգվածային լրատվամիջոցների օգտագործումը՝ հաղորդագրությունը ողջ հանրությանը հասցնելու նպատակով: ԱՎԻ համար դա արդյունավետ գործիք է, որը անհրաժեշտ տեղեկատվությունը ծախսարդյունավետ կերպով և ժամանակին հաղորդում է հանրությանը՝ ականների և ՊՊՄ-ների մասին իրազեկության բարձրացման և ականների ազդեցությանը ենթարկված բնակչության շրջանակներում վարքագծի փոփոխության խթանման նպատակով: Լրատվամիջոցների օգտագործման մակարդակը և հիմնականում օգտագործվող լրատվամիջոցների տեսակները տարբեր կլինեն ինչպես տարբեր երկրների միջև, այնպես էլ երկրի ներսում, սակայն պլանում անհրաժեշտ է դիտարկել նպատակային լսարանը և լսարանին տեղեկություններ տրամադրելու համար առավել նպատակահարմար լրատվամիջոցի ընտրությունը:

Դա իրականացնելու համար տարբեր հեռուստաալիքների և ռադիոկայանների հեռուստադիտողների և ունկնդիրների, թերթերի և ամսագրերի տպաքանակների թվերը պետք է ճշտվեն և հնարավորության դեպքում պետք է բաժանվեն ըստ աշխարհագրական կամ ժողովրդագրական ցուցանիշների: Հաղորդագրության ներկայացման ժամանակը, հաճախականությունը և ազդեցիկությունը պետք է նաև դիտարկվեն առանց չափազանց հաճախ կրկնության կամ ծանրաբեռնման հետևանքով հակառակ ազդեցության առաջացման (այսինքն ականների/ՊՊՄ-ների ռիսկի նկատմամբ նպատակային խմբերի մոտ անտարբերության առաջացման) առավելագույն ազդեցություն ապահովելու նպատակով:

Հարմարության դեպքում, օրինակ ազգային մակարդակով լրատվամիջոցների այնպիսի քարոզարշավ պլանավորելիս, որն ուղղված է նպատակային խմբերի ամբողջական ներառմանը, ԱՎԻ կազմակերպության համար կարող է առավել արդյունավետ լինել համագործակցել շուկայաբանության գործակալության հետ՝ լրատվամիջոցների քարոզարշավի ռազմավարությունը մշակելու նպատակով: Տեղական լրատվամիջոցների հետ աշխատելիս լրատվամիջոցների կողմից ընդգրկված տարածքն սովորաբար ավելի քիչ մրցակցային է և լրատվամիջոցների քարոզարշավը կարող է սովորաբար արդյունավետորեն պլանավորվել՝ տեղական լրատվամիջոցների հետ որպես գործընկերներ համագործակցելու միջոցով:

## 6.2. Կրթման և վերապատրաստման միջոցառումների պլանավորում

Գոյություն ունեն կրթման և վերապատրաստման միջոցառումների երկու դասակարգեր.

- ա) ԱՎԻ կազմակերպության կողմից ուղղակի կրթում և վերապատրաստում, և
- բ) Կրթողների կրթում (ԿԿ)

Որոշ կազմակերպություններ օգտագործում են իրենց սեփական անձնակազմն ականներ ունեցող համայնքներին կրթելու նպատակով, որը սովորաբար իրականացվում է անհետաձգելի իրավիճակների դեպքում: Մյուսները համագործակցում են գործընկերների հետ և կրթում են այլոց դասընթացն անցկացնելու ուղղությամբ: ԿԿ այս մոտեցման օրինակներ կարող են լինել դպրոցական ծրագրի շրջանակներում ԱՎԻ իրականացման համար ուսուցիչների կրթումը, համայնքի կամավորների կրթումն իրենց համայնքների անդամներին կրթելու նպատակով կամ երեխաների կրթումը՝ իրենց հասակակիցների շրջանակներում կրթում իրականացնելու համար:

Նշում՝ Երկու մոտեցումները փոխադարձաբար չեն բացառում միմյանց և կազմակերպությունները կարող են հաճախ գործունեությունն սկսել ուղղակի դասընթացներ անցկացնելով և աստիճանաբար անցում կատարեն դեպի ԿԿ:

Պլանավորման կարևոր մասն է դիտարկել, թե արդյոք դասընթացն իրականացվելու է ուղղակիորեն, թե գործընկերների միջոցով: Վերջինիս դեպքում անհրաժեշտ է ընտրել առավել հարմար գործընկերներին՝ հաղորդագրությունը նպատակային խմբերին արդյունավետորեն հաղորդելու նպատակով: Այնուհետև անհրաժեշտ է դիտարկել կրթողներին կրթելու և աջակցություն ցուցաբերելու համար պահանջվող ժամանակը և ռեսուրսները:

Նշում՝ Սույն փաստաթղթում 'կրթում' տերմինը ներառում է պաշտոնական կրթումը և գիտելիքների ոչ պաշտոնական փոխանցումը: Օրինակ՝ կամավորների կամ ուսուցիչների կրթումը կարող է լինել բավականին կառուցվածքային, սակայն այլ դեպքերում այն կարող է առհասարակ կառուցվածք չունենալ կամ չլինել պաշտոնական դասընթաց, այլև քննարկումների մի շարք, որոնք կօժանդակեն անվտանգության վերաբերյալ հաղորդագրությունների մշակմանը: Սա կարող է իրականացվել այն դեպքերում, երբ որպես ԱՎԻ գործընկերներ են ընտրվում կրոնական կամ համայնքային առաջնորդները:

**6.3. Ականազերծման գործողությունների վերաբերյալ համայնքների հետ հաղորդակցման պլանավորում**

Ականազերծման գործողությունների վերաբերյալ համայնքների հետ հաղորդակցումը վերաբերվում է այն համակարգին և ընթացակարգերին, որոնք օգտագործվում են ազգային մարմինների, ականազերծող կազմակերպությունների և համայնքների միջև ականների և ՊՊՄ-ների առկայության և նրանց պոտենցիալ ռիսկի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման համար: Այն հնարավորություն է տալիս համայնքներին տեղեկանալ այն մասին, թե երբ է պլանավորվում իրականացնել ականազերծման գործողությունը, առաջադրանքի բնույթի և տևողության, և նշագծված կամ վնասազերծված տարածքների գտնվելու հստակ վայրի մասին:

Բացի այդ, այն հնարավորություն է տալիս համայնքներին տեղեկացնել տեղական իշխանություններին և ականազերծման կազմակերպություններին ականապատ տարածքների տեղի, չափի և ունեցած ազդեցության վերաբերյալ: Այս տեղեկատվությունը կարող է մեծապես նպաստել ականազերծման հետագա գործողությունների պլանավորմանը, ինչպիսիք են տեխնիկական հետազոտությունը, նշագծումը և վնասազերծումը, և անհրաժեշտության դեպքում ականառումբերի պայթյուններից հետո կենդանի մնացած անձանց աջակցության ցուցաբերումը: Ականազերծման գործողությունների վերաբերյալ համայնքների հետ հաղորդակցումը հաշվետվությունների ներկայացման կարևոր կապ է ստեղծում ծրագրի պլանավորման անձնակազմի համար և թույլ է տալիս մշակել պատշաճ և տեղանքի համար հատուկ ռիսկի նվազեցման ռազմավարություններ: Ականազերծման գործողությունների վերաբերյալ համայնքների հետ հաղորդակցումը նպատակ է հետապնդում ապահովել այն, որ ականազերծման ծրագրերը հոգան համայնքի կարիքները և ապահովեն նրա գերակայությունները:

Համայնքների հետ հաղորդակցումը համայնքներին հնարավորություն է տալիս նաև տեղեկացնել կազմակերպություններին և իշխանություններին ցանկացած խնդիրների կամ բարդությունների վերաբերյալ, որոնք առաջանում են ականազերծման գործողությունների հետևանքով: Այս խնդիրները կարող են լինել աշխատանքի հետ կապված կամ սոցիալական:

Ականազերծման գործողությունների վերաբերյալ համայնքների հետ հաղորդակցումը պետք է իրականացվի ականազերծման գործողություններ իրականացնող բոլոր կազմակերպությունների կողմից: Մրանք կարող են լինել ԱՎԻ կազմակերպություններ կամ ականազերծող կազմակերպության ԱՎԻ ուղղությամբ աշխատող անձինք կամ ‘ստորաբաժանումներ’:

Ականների ազդեցությանը ենթարկված բնակիչների հետ ականազերծման գործողությունների վերաբերյալ հաղորդակցումը կարող է սկսվել ականազերծման գործողություններից բավականին շուտ և ռիսկի գնահատման, տեղեկատվության կառավարման և ռիսկի նվազեցման տեղական ռազմավարությունների մշակման նպատակով կարող է օժանդակել համայնքի մակարդակով ներուժի զարգացմանը: Սա կարող է աջակցել համայնքներին հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվությունը համապատասխան շահառուների վրա ներազդելու և խթանելու համար ականազերծման գործողությունների և այլ օժանդակությանն ուղղված միջամտությունները:

Ականազերծման ցանկացած միջոցառումից առաջ ականազերծման գործողությունների վերաբերյալ համայնքների հետ հաղորդակցման պահանջը նշանակում է, որ միանման աշխարհագրական տարածքում աշխատող ականազերծող կազմակերպությունները պետք է միմյանց հետ համակարգված գործունեություն իրականացնեն ականազերծման գործողությունների վերաբերյալ համայնքների հետ հաղորդակցման համատեղ պլանավորման նպատակով:

## 7. Ուղղորդող սկզբունքներ

Ինչպես ներկայացված է 'Ականների ռիսկի վերաբերյալ կրթման կառավարման ուղեցույցում' (ՀԱԳՄՉ 07.11), ԱՎԻ համար չափորոշիչների շարքը հիմնված է ԱՎԻ պահանջների և սկզբունքների ամբողջության վրա, որոնք պետք է դիտարկվեն ծրագրի ընթացքի յուրաքանչյուր փուլում և ներկայացնեն չափորոշիչների ձևաչափի կառուցվածքը: Այս պահանջներից յուրաքանչյուրը հերթականությամբ ներկայացված են ստորև՝ ԱՎԻ ծրագրի պլանավորման համար ուղղություններ տրամադրելու նպատակով:

### 7.1. Շահառուների ներգրավում

Ականներ ունեցող համայնքները հանդիսանում են ականագերծման գործողությունների հիմնական շահառուները: Այլ շահառուներ են ականագերծող կազմակերպությունները, կառավարությունները և հասարակական կազմակերպությունները, օգնություն տրամադրող գործակալությունները և համայնքային խմբերը: Ծրագրի ցանկացած փուլում անհրաժեշտ է շահառուների մասնակցությունը՝ ապահովելու համար.

- ա) ականներ ունեցող համայնքների և խմբերի կարիքների բավարարումը,
- բ) ազգային և տեղական տնտեսական և զարգացման գերակայությունների դիտարկումը, և
- գ) ականագերծման գործողությունների կողմից մարդասիրական և զարգացման միջոցառումների օժանդակությունը:

Պլանավորման գործընթացը կարող է ներառել շահառուներին, սակայն պարտադիր կերպով չի պահանջում նրանց մասնակցությունն այն դեպքում, եթե դրանք լիարժեքորեն ներգրավված են եղել կարիքների գնահատման գործում (տես ՀԱԳՄՉ 08.50 Ականների ռիսկի վերաբերյալ կրթման համար տվյալների հավաքագրում և կարիքների գնահատում):

### 7.2. Համակարգում

ԱՎԻ պետք է լինի լավ համակարգված ինչպես նախագծերի միջև, այնպես էլ նրանց շրջանակներում: Արդյունավետ համակարգումը հնարավորություն կտա ապահովել դասախոսությունների բովանդակության շարունակականությունը, օպտիմալացնել ռեսուրսների օգտագործումը և նվազագույնի հասցնել միջոցառումների կրկնությունները: Արդյունավետ պլանավորումը պահանջում է արդյունավետ համակարգում:

### 7.3. Ինտեգրում

ԱՎԻ միջոցառումները պետք է լիովին ինտեգրված լինեն ականագերծման այլ գործողությունների, մարդասիրական և զարգացման միջոցառումների մեջ՝ սիներգետիկ ազդեցության հասնելու նպատակով:

Ազգային մակարդակով ԱԳԱՄ պետք է խթանի ականագերծման գործողությունների ազգային պլանավորման ինտեգրումը ականներ/ՊՊՄ-ների ունեցող տարածքներում աշխատող բոլոր համապատասխան ոլորտների և կազմակերպությունների մեջ: Նման ինտեգրված միջոցառումների պլանավորման ժամանակ ԱԳԱՄ պետք է ներկայացնի ինտեգրման պլան և այն պարբերաբար նորացնի:

ԱԳԱՄ պետք է խթանի կազմակերպություններին ընդլայնել ականազերծման գործողությունների միջամտությունների շրջանակները: Օրինակ՝ ԱՎԻ և վերապատրաստման միջոցառումներ իրականացնող ականազերծող գործակալությունը կարող է կարիք ունենալ ուսումնասիրել, թե արդյոք այն պետք է նաև ներգրավվի հանրային տեղեկատվության տարածման կամ համայնքների հետ հաղորդակցման միջոցառումներում, կամ նույնիսկ ոչ ԱՎԻ միջոցառումներում, ինչպիսիք են նշագծումը և ցանկապատումը, պայթուցիկ զինամթերքի վերացումը (ՊԶՎ) կամ տուժածներին օգնության ցուցաբերումը:

#### **7.4. Համայնքների մասնակցություն և լիազորություն**

ԱՎԻ առաջնային շահառուներն են ականներ ունեցող համայնքների անդամները, և մասնակցության միջոցով համայնքների լիազորման հայեցակարգը պետք է ԱՎԻ նախագծերի իրականացման ընթացքում ձևավորի այդ նախագծերը:

Համայնքի ականազերծման պլանը պետք է լինի մշակված, հիմնված ականներ ունեցող համայնքի արտահայտված կարիքների վրա, և այս կարիքները պետք է ներառված լինեն ականազերծման գործողությունների պլանավորման առավել բարձր մակարդակի մեջ:

Նշում՝ Համայնքի 'կարիքները' հաճախ ներառում են տնտեսական կարիքները (օր.՝ եկամտի կարիքը), և չնայած այս կարիքը հնարավոր չէ հոգալ ականազերծման միջոցով, ԱՎԻ պլանավորումը կարող է ի գիտություն ընդունել այդ փաստը և ներգրավել այլ գործընկերների, ովքեր կարող են աջակցություն ցուցաբերել և օժանդակել եկամտի ստեղծման միջոցառումների անցկացմանը:

Ականներ ունեցող համայնքների անդամները կարող են մասնակցել պլանավորման գործընթացում կամ պլանի գնահատման մեջ: Համայնքի ներսում տարբեր խմբերի ներկայացուցիչները կարող են պլանավորման ընթացքում զբաղեցնել առաջատար դերեր (ըստ իրենց ունակությունների):

Տվյալների հավաքագրման և կարիքների գնահատման փուլում համայնքի ներգրավումը պետք է խթանի և օժանդակի ԱՎԻ նյութերի ստեղծումը հենց ականներ ունեցող համայնքների կողմից: Պլանավորման փուլում այս դրույթը կարող է դրական ազդեցություն ունենալ նախագծի շարունակականության վրա:

Պլանավորման գործընթացը պետք է հաշվի առնի ծրագրի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը և նրա շարունակականության հարցերը:

#### **7.5. Տեղեկատվության կառավարում և փոխանակում**

ԱՎԻ ծրագրերի և նախագծերի արդյունավետ պլանավորումը պահանջում է մանրակրկիտ, պատշաճ և ժամանակին ստացվող տեղեկատվություն: Տեղական, ազգային և միջազգային մակարդակով գոյություն ունեն տեղեկատվության բազմաթիվ աղբյուրներ, որոնցից ստացված և ստուգված տեղեկատվությունն անհրաժեշտ է բազմաթիվ անձանց համար, ովքեր ներգրավված են ԱՎԻ ծրագրերի պլանավորման, իրականացման, վերահսկման և գնահատման մեջ:

ԱԳԱՄ և ԱՎԻ կազմակերպությունները պետք է սահմանեն և պահպանեն տեղեկատվության կառավարման արդյունավետ համակարգեր: ՄԱԿ Ականազերծման գործողությունների տեղեկատվության կառավարման համակարգը (ԱԳՏԿՀ) մշակվել է օգնելու համար հաստատություններին ժամանակին հավաքագրել, ստուգել և տրամադրել համապատասխան տեղեկատվությունը դաշտային և գլխավոր գրասենյակների մակարդակով: ԱԳՏԿՀ հասանելի է ականազերծման բոլոր ծրագրերի համար:

Տեղեկատվության կարիքների, կառավարման և ակնազերծման ծրագրերում, ներառյալ ԱՎԻ ծրագրերում, տեղեկատվական համակարգերի կիրառման վերաբերյալ ուղղությունները բերված են ՀԱԳՄՉ 05.10-ում:

Պետք է հավաքագրվի նաև համայնքներում՝ ‘գյուղերի ակնազերծման’<sup>2</sup> պրակտիկայի վերաբերյալ տեղեկատվությունը, քանի որ այդ խմբերն հաճախ ավելի տեղեկացված են համայնքին սպառնացող վտանգների բնույթի վերաբերյալ և որոշակի գերակայություններ են ունենում՝ կապված իրենց աշխատանքի բնույթի հետ:

Նշում՝ Ականներից տուժածների վերաբերյալ ցանկացած տվյալ կարող է չափազանց զգայուն խնդիր լինել և անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ականների պայթյուններից հետո կենդանի մնացածների և տուժածների ընտանիքների անունները և անձնական տվյալները գաղտնի պահելու ուղղությամբ:

## 7.6. Պատշաճ ուղղվածություն

Ակնազերծման ծրագրերը պետք է ունենան հստակ կոնստրուկտ և հաշվի առնեն ականներ ունեցող համայնքների տարբեր կարիքներ և գերակայություններ, ինչպես նաև տարբեր տեղական մշակույթային արժեքներ և նորմեր:

Ծրագրի պլանավորումը պետք է ապահովի ռիսկի ենթարկված համայնքների անդամների համապատասխան պաշտպանությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով առավել կարիքավոր անդամներին: Ծրագրի պլանավորումը պետք է հաշվի առնի և ապահովի տարբեր խմբերի կարիքները և պաշտպանի նրանց իրավունքները: Այն չպետք է որևիցե ուղղվածություն ունենա կախված սեռից, տարիքից, ազգությունից և այլն:

Ծրագրի կամ նախագծի պատշաճ հասցեականությունը պետք է հիմնավորված լինի հավաքագրված տվյալներով և գնահատմամբ: Պլանավորումը պետք է հաշվի առնի այն մշակույթային յուրահատկությունները, որոնք առաջ են գալիս կարիքների գնահատման արդյունքում և պետք է ցույց տան, որ տարբեր խմբերի ներսում և միջև գոյություն ունեցող հզորության-ազդեցության ցուցաբերմամբ յուրաքանչյուր հարաբերություն հաշվի է առնվել: Սա կարող է թույլ տալ հոգավ կարիքավոր խմբերի կարիքները նույնիսկ այլ խմբին ուղղված միջոցառումներ իրականացնելու ընթացքում, օրինակ՝ մայրերի միջոցով երեխաների հետ հաղորդակցում:

Ապահովելու համար այն, որ ԱՎԻ միջոցառումները պատշաճ կերպով արձագանքեն տարբեր նպատակային խմբերի կարիքներին.

- ա) Նախագիծը պետք է ներառի այնպիսի մոտեցումներ, մեթոդաբանություններ, նյութեր և հաղորդագրություններ, որոնք հիմնված են կարիքների գնահատման արդյունքների վրա և հարմարեցված են նպատակային խմբին: Օրինակ՝ որտեղ անհրաժեշտ է ԱՎԻ նյութերը կարող են լինել վտանգների վրա կենտրոնացած:
- բ) Պլանավորումը պետք է ապահովի, որպեսզի ծրագրերը լինեն զգայուն մշակույթային խնդիրների նկատմամբ, այսինքն համահունչ լինեն ականների ազդեցությանը ենթարկված բնակչության մշակույթային արժեքների և նորմերի հետ: Մակայն կարող է հարմար չլինել պահպանել նման մշակույթային արժեքներ և նորմերը, եթե դրանք բացասաբար են անդրադառնում որոշ անձանց արժանապատվության և իրավունքների վրա: Օրինակ՝ եթե մշակույթի մի մասն է կազմում սեռական խտրականությունը, պլանավորման ընթացքում կարող է պահպանվել սեռական հավասարությունը:

2. ‘Գյուղերի ակնազերծում’ տերմինի սահմանման համար տես *Հավելված Բ*:

- զ) Պլանը պետք է ներառի ցանկացած հաղորդագրության, մեթոդաբանության և նյութի նախնական փորձարկման գործընթացը՝ էլնելով կարիքներից և նպատակային լսարանի մասնակցությունից, և
- ը) հնարավոր է շատ դասեր քաղել նախորդ փորձերից, ներառյալ այլ երկրներում իրականացրած ծրագրերից և նախագծերից: Նման ծրագրերի վերահսկման և գնահատման փորձերը և արդյունքները կարող են հաշվի առնվել պլանավորման գործընթացում:

Պլանում պետք է դրույթներ մշակվեն նպատակային խմբերի հետ աշխատելու համար առավել կոմպետենտ անձնակազմ օգտագործելու ուղղությամբ: Մասնավորապես.

- ա) այն պետք է ներառի բավարար ժամանակ և ռեսուրսներ համապատասխան անձնակազմի պատրաստման և կրթման համար, օրինակ՝ ինտերակտիվ մեթոդաբանությունների իրականացման համար,
- բ) հնարավորության դեպքում տարբեր տարիքի, սեռի և հետաքրքրություններ ունեցող խմբեր պետք է աշխատեն համապատասխան տարիքի, սեռի և հետաքրքրություններ ունեցող խմբի դասավանդողների և դասընթացը վարողների հետ, և
- գ) հնարավորության դեպքում կազմակերպություններն իրենց աշխատակիցների միջև պետք է պահպանեն սոցիալական խմբերի (ներառյալ սեռատարիքային, համապատասխան փորձ ունեցող և այլ խմբերի) հավասարակշռությունը:

Պլանում անհրաժեշտ է դիտարկել տուժածներին ուղղված քաղաքականության առկայությունը, և մասնավորապես հաշվի առնել.

- ա) հաշմանդամության վերաբերյալ իրազեկության բաղադրիչը՝ ծրագրում ներառելու համար,
- բ) ականներից տուժածներին (օր.՝ հաշմանդամություն ունեցողներին) ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ արդյունավետ համագործակցության մեխանիզմների սահմանումը,
- գ) որտեղ անհրաժեշտ է, տեղեկությունների ստացումն ականներից տուժածների վերաբերյալ ազգային տվյալների բազայից և հնարավորության դեպքում տեղեկատվության մուտքագրումը դրա մեջ,
- դ) հնարավորության դեպքում տուժածների ներգրավումը օգտագործվելիք հաղորդագրության պատշաճ լինելը, պարզությունը և արժեքավոր լինելը գնահատելու համար,
- ե) տուժածների ներգրավման քաղաքականության խթանումը,
- զ) անհրաժեշտության դեպքում ականներից տուժածներին աջակցող կոմպետենտ կազմակերպություններին օժանդակության ցուցաբերումը (ֆինանսական, նյութատեխնիկական),
- է) ծրագրի, ազգային և գլոբալ մակարդակների վրա տուժածների և տեղական համայնքի միջև կապ սահմանելու ուղղությամբ աջակցությունը, և
- ը) դժբախտ պատահարների դեպքում դեպի պատշաճ բուժօժանդակություններ էվակուացիայի իրականացումը:

Պլանում պետք է դիտարկվեն 'գյուղերի ականագերծման' ցանկացած միջոցառումներ, որոնք կարող են առաջ գալ նպատակային տարածքներում: Մասնավորապես.

- ա) գյուղերում ականագերծողների ընդհանուր մոտիվացիայի և աշխատանքային պրակտիկայի գնահատումը,
- բ) նրանց աշխատանքի գերակայությունների վերլուծությունը,
- գ) աղտոտված տարածքների գտնվելու վայրի, որտեղ աշխատել են գյուղերի ականագերծողները, կամ աշխատանքի պլանի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, և նրանց կողմից հեռացվելու, վերացվելու կամ այլապես վնասագերծվելու հավանականություն ունեցող առարկաների տեսակները և թվերը, և
- դ) այլ տեղական բնակիչներից գյուղերի ականագերծողների աշխատանքի վերաբերյալ արձագանքի ստացումը:

### 7.7. Կրթում

Պլանավորման ուղղությամբ կրթման մեթոդաբանությունների և պատշաճ բովանդակության մշակումը պետք է հիմնված լինի կարիքների գնահատման վրա.

- ա) անվտանգության հաղորդագրությունները պետք է արտացոլեն կարիքների գնահատումը և անհրաժեշտության դեպքում հաստատվեն ԱԳԱՄ կողմից: Տրամադրվող հաղորդագրությունները և տեղեկատվությունը պետք է հարմարեցվեն տեղական իրավիճակին և տեղական նպատակային խմբերին՝ ըստ կարիքների գնահատման արդյունքների, և տարածումից առաջ պետք է անցնեն դաշտային փորձարկում: Կրթման և վերապատրաստման ծրագրերի համար մշակված նյութերը պետք է լինեն պարզ, հստակ, ընթերցելի, գրված պատշաճ լեզվով, համապատասխան, իրատեսական, գրավիչ, ճշգրիտ, մշակույթային և կրոնական տեսանկյունից զգայուն, կայուն և մնայուն: Հաղորդագրությունները և նյութերը պետք է արտացոլեն բնակչությանը սպառնացող վտանգի բնույթը, անկախ նրանից, թե դա առաջանում է ականներից թե ՊՊՄ-ներից (ներառյալ ցանկացած կոնկրետ վտանգ, ինչպիսիք են ծուղակ ականները):
- բ) անհետաձգելի փրկարար ծառայության տեխնիկաները (ներառյալ ականի/ՊՊՄ վտանգի հայտնաբերման դեպքում գործողությունները և ականապատ դաշտում դժբախտ պատահարի դեպքում գործողությունները և պահանջվող արձագանքը) պետք է ներառված լինեն որպես անվտանգության վերաբերյալ հաղորդագրության մի մաս: Այս պահանջները պետք է հիմնված լինեն կարիքների գնահատման և ենթակառուցվածքի ներուժի վրա (բուժհաստատություններ, տրանսպորտային միջոցներ և այլն), որոնք առկա են նպատակային լսարանի (համայնքի) մոտ: Նման հաղորդագրությունները պետք է հաստատվեն ԱԳԱՄ կողմից:
- գ) գյուղերի ականագերծումը պետք է դիտարկվի և ներառվի անվտանգության հաղորդագրության պլանավորման և մշակման մեջ, և հնարավորության դեպքում այս հաղորդագրությունները ևս պետք է հաստատվեն ԱԳԱՄ կողմից, և
- դ) անվտանգության հաղորդագրությունները պետք է հայցեն համայնքի աջակցությունն ականագերծման գործողությունների իրականացմանը (օր.՝ մուտք չգործել վտանգավոր տարածքներ կամ հեռացնել նշագծումը)՝ ապահովելու համար այն, որ հետազոտության կամ վնասագերծման գործողությունների ընթացքում ոչ ոք չենթարկվի ռիսկի:



## 7.8. Վերապատրաստում

Ծրագրի իրականացման, վերահսկման և գնահատման գործում ներառված անձանց վերապատրաստման պահանջները պետք է դիտարկվեն նախագծի պլանավորման փուլում: Սա ներառում է դասընթացն անցկացնողների, դասընթացի մասնակիցների, դասընթացի թեմաների և նրա կազմակերպման եղանակի դիտարկումը: Վերապատրաստման նման պահանջների համար պետք է հաշվի առնվեն նաև բյուջեի հնարավորությունները:

Դասընթացը և կրթման ծրագիրը պետք է հիմնված լինեն կարիքների գնահատման արդյունքների վրա: Պլանը պետք է ներառի ուսումնական պլանի մեթոդաբանությունը և վերապատրաստման նկատմամբ մոտեցումները: Ժամանակի տևողությունը պետք է հստակեցված լինի վերապատրաստման պլանում՝ ըստ միջոցառումների: Հարակից կազմակերպությունների ներգրավումը կարևոր քայլ է պլանավորման գործընթացի իրականացման ընթացքում: Նման ներգրավումը կարող է տեղի ունենալ տարբեր մակարդակների վրա և հետևաբար պետք է լինի բավականին ճկուն:

Պետք է կազմակերպվի ԱՎԻ անձնակազմի իրազեկումը տուժածներին աջակցության բնույթի վերաբերյալ, և ականազերծման գործողությունները և նման ծրագրերի աշխատակիցները պետք է նմանապես իրազեկվեն ԱՎԻ միջոցառումների վերաբերյալ՝ խթանելու համար ռիսկի նվազեցման լրացուցիչ մոտեցումների ըմբռնումը:

Որտեղ հարմար է, պետք է դիտարկվեն ականազերծողների վերապատրաստումները՝ հեռավոր տարածքներում վնասազերծման կամ հետազոտման աշխատանքներ իրականացնելու ընթացքում ԱՎԻ (հիմնականում համայնքի հետ հաղորդակցում) անցկացնելու նպատակով:

Անձնակազմի անվտանգությունը պետք է լինի ԱՎԻ ծրագրի պլանավորման մի մասը: Սա ներառում է անձնակազմի համար ականառումների և ՉՊԶ անվտանգության վերաբերյալ կրթման պլանավորումը<sup>3</sup> և Անվտանգության ու աշխատանքային հիգիենայի (ԱնԱՀ) ընդհանուր վերապատրաստման պլանավորումը (տես ՀԱԳՄՉ 10.10)<sup>4</sup>:

## 8. Պարտավորություններ

Հստակ դերերի և պարտականությունների սահմանված չլինելու դեպքում ընթերցողը պետք է հղում կատարի ՀԱԳՄՉ 07.11 ԱՎԻ կառավարման ուղեցույցին:

### 8.1. Միացյալ ազգերի կազմակերպություն

ՄԱԿ գործակալությունները պետք է օժանդակեն ԱԳԱՄ՝ ԱՎԻ ծրագրերի և նախագծերի պլանավորման ժամանակ ստանդարտների մշակման և պահպանման գործում: Որոշ դեպքերում և որոշակի պահերին ԱՆ կարող է ստանձնել ԱԳԱՄ որոշ կամ բոլոր պարտականությունները և իրականացնել նրա որոշ կամ բոլոր գործառույթները, ներառյալ ԱՎԻ ազգային պլանավորման պարտականությունը:

### 8.2. Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)

ԱԳԱՄ կամ նրա անունից գործող կազմակերպությունը պետք է.

- ա) նախապատրաստի ԱՎԻ ազգային պլանը որպես ականազերծման գործողությունների ազգային ծրագրի մի մաս,

3. Տես ՀԱԳՄՉ ականառումների և ՉՊԶ անվտանգության ձեռնարկը:

4. Որտեղ կիրառելի են, տես ԱնԱՀ Ազգային չափորոշիչները:

- բ) համագործակցի ԱՎԻ և ականագերծման այլ կազմակերպությունների հետ ազգային ծրագրի նախապատրաստման գործում՝ խուսափելու համար միջոցառումների կրկնությունից և ռեսուրսներ վատնելուց,
- գ) որտեղ հնարավոր է ռեսուրսներ տրամադրի (մասնավորապես տեղեկատվություն)՝ պլանավորմանն օժանդակելու նպատակով,
- դ) ականագերծման գործողությունների (ներառյալ ԱՎԻ) պլանավորման ընթացքում գործողությունները համակարգի այլ ոլորտների կազմակերպությունների (օր.՝ կրթման, տեղեկատվական և այլն) գործողությունների հետ:
- ե) անհրաժեշտության դեպքում օժանդակի ազգային իշխանություններին, մասնավորապես այլ հարակից ոլորտների հետ կապված, ինչպիսիք են առողջապահությունը և սոցիալական հարցերը (աջակցություն տուժածներին) կամ կրթությունը (ներառյալ ԱՎԻ դպրոցական պաշտոնական ծրագրի մեջ), և
- զ) հաստատի պլանը որպես ԱՎԻ գործողությունների հավաստագրման մի մաս:

### **8.3. ԱՎԻ կազմակերպություն**

ԱՎԻ կազմակերպությունները.

- ա) պետք է կազմեն ծրագրերի պլանները, որոնք կհամակարգվեն ԱԳԱՄ կողմից,
- բ) պետք է ապահովեն նպատակային համայնքի և տեղական իշխանությունների ներգրավումը պլանավորման փուլում, և
- գ) ծրագրի պլանների մշակման ժամանակ պետք է գործողությունները համակարգեն համապատասխան կազմակերպությունների (օր.՝ ԱՎԻ և ականագերծման կազմակերպությունների և այլ մարդասիրական և զարգացման կազմակերպությունների), ինչպես նաև ազգային և տեղական պետական մարմինների (օր.՝ Կրթության, առողջապահության, պլանավորման, սոցիալական ապահովության նախարարությունների) հետ:

### **8.4. Դոնորներ**

Դոնորները պետք է.

- ա) ֆինանսավորեն միայն այն ծրագրերը, որոնց պլանները համապատասխանում են ականագերծման գործողությունների ազգային ծրագրին,
- բ) պլանավորման փուլում գործունեությունը համակարգեն ԱԳԱՄ կամ այլ դոնորների հետ՝ գործողությունների կրկնություններից խուսափելու նպատակով,
- գ) ծրագրի պլանավորման փուլում ապահովեն անհրաժեշտ ռեսուրսների տրամադրումը:

Բացի այդ դոնորները կարող են մասնակցել գերակայությունների սահմանման, ծրագրի պլանավորման և մշակման ու շահառուների որոշման գործում:

## Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր

Հետևյալ նորմատիվ փաստաթղթերը պարունակում են դրույթներ, որոնք այս տեքստի հղումների միջոցով կազմում են չափորոշիչի այս մասի դրույթները: Ամսաթվեր պարունակող հղումների դեպքում՝ այդ հրապարակումներում հետագայում կատարված փոփոխությունները կամ վերանայումները չեն կիրառվում: Սակայն չափորոշիչի այս մասի վրա հիմնված համաձայնագրերի կողմերին խրախուսվում է հնարավորություն գտնել՝ ստորև նշված նորմատիվ փաստաթղթերի առավել թարմ տարբերակները կիրառելու համար: Ամսաթիվ չպարունակող հղումների դեպքում կիրառվում է այդ նորմատիվ փաստաթղթի ամենավերջին տարբերակը: ISO-ի և IEC-ի անդամներն ունեն վավեր ISO կամ EN գրանցամատյան.

- ա) ՀԱԳՄՉ 04.10 Ականազերծման գործողությունների տերմիններ, սահմանումներ և հասկացումներ;
- բ) ՀԱԳՄՉ 05.10 Տեղեկատվության կառավարում;
- գ) ՀԱԳՄՉ 07.11 Ականների վտանգի մասին իրազեկման կառավարման ուղեցույց;
- դ) ՀԱԳՄՉ 08.50 Ականների ռիսկի գնահատման համար տվյալների հավաքագրում և կարիքների գնահատում,;
- ե) ՀԱԳՄՉ 10.10 Անվտանգություն և աշխատանքի հիգիենա – ընդհանուր պահանջներ:

Պետք է օգտագործվի սույն հղումների վերջին տարբերակը/հրատարակությունը: ՄԱԺՄԿ-ն պահպանում է սույն չափորոշիչում օգտագործվող բոլոր հղումների օրինակները: ՀԱԳՄՉ չափորոշիչների, ուղեցույցների և հղումների վերջին տարբերակի/հրատարակության ռեգիստրը վարվում է ՄԱԺՄԿ-ի կողմից և առկա է ՀԱԳՄՉ կայքէջում (<http://www.mineactionstandards.org>): ԱԳԱՄ, գործատուները և այլ հետաքրքրված մարմինները և կազմակերպությունները պետք է ձեռք բերեն այդ օրինակները նախքան ականազերծման գործողությունների ծրագրերի մեկնարկը:

## **Հավելված Բ** **(Տեղեկատվական)** **Տերմիններ, սահմանումներ և հապավումներ**

### **B.1.**

#### **Համայնքի հետ կապի ապահովում**

##### **Ականազերծման գործողություններում համայնքի հետ կապի ապահովում**

Կապի ստեղծում ականներ/ՊՊՄ տարածքներ ունեցող համայնքների հետ, որի նպատակն է տեղեկություններ փոխանակել ականների/ՊՊՄ առկայության և ազդեցության վերաբերյալ, հաշվետվական կապ ստեղծել ականազերծման գործողությունների ծրագրի հետ և մշակել ռիսկի կրճատման ռազմավարություններ: Համայնքի հետ կապի նպատակն է երաշխավորել, որ ականազերծման գործողությունների ծրագիրը պլանավորելիս, իրականացնելիս և մոնիտորինգ իրականացնելիս համայնքի կարիքները և գերակայությունները առաջին տեղում լինեն:

Նշում՝ Համայնքի հետ կապը հիմնված է տեղեկությունների փոխանակման վրա և մասնակից է դարձնում համայնքներին որոշումների կայացման գործընթացին (ականազերծումից առաջ, դրա ընթացքում և հետո)՝ ականազերծման գործողությունները ըստ գերակայությունների սահմանելու համար: Արդյունքում ականազերծման գործողությունների ծրագրերը լինում են ներառական, համայնքի կարիքներին միտված և ապահովում են համայնքի բոլոր հատվածների առավելագույն մասնակցությունը: Վերջինս ներառում է նախագծերի համատեղ պլանավորումը, իրականացումը, մոնիտորինգը և գնահատումը:

Նշում՝ Համայնքի հետ կապի նպատակներից մեկը անվտանգության միջանկյալ ռազմավարության համատեղ մշակումն է՝ խրախուսելու համար անհատական և համայնքային վարքագծի փոփոխությունը: Ռազմավարության նպատակն է կրճատել անհատների և համայնքի վրա ականների/ՊՊՄ ազդեցությունը մինչև վտանգը լիովին վերացվի:

### **B.2.**

#### **Ականազերծում**

##### **Մարդասիրական ականազերծում**

Գործողություններ, որոնք տանում են դեպի ականների և ՊՊՄ-ների հեռացումը, ներառյալ տեխնիկական հետազոտության, քարտեզագրման, վնասազերծման, նշագծման, հետմաքրման փաստաթղթավորման, ականազերծման գործողությունների վերաբերյալ համայնքների հետ հաղորդակցման և վնասազերծված տարածքների հանձնման իրականացումը: Ականազերծումը կարող է իրականացվել տարբեր տեսակի կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են ՀԿ-ները, առևտրային կազմակերպությունները, ականազերծման գործողությունների ազգային խմբերը կամ ռազմական միավորները: Ականազերծումը կարող է լինել հիմնված անհետաձգելի իրավիճակների վրա կամ կապված զարգացման գործողությունների հետ:

Նշում՝ ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցներում ականների և ՊՊՄ-ների վնասազերծումը համարվում է ականազերծման գործընթացի միայն մեկ մասը:

Նշում՝ ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցներում ականազերծումը համարվում է ականազերծման գործողությունների միայն մեկ բաղադրիչ:

Նշում՝ ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցներում ականազերծում և մարդասիրական ականազերծում տերմինները փոխադարձաբար փոխարինելի են:

### **B.3.**

#### **Կրթում**

Սովորեցնելու և սովորելու միջոցով ժամանակի ընթացքում գիտելիքների (փաստերի, գաղափարների, ճշմարտության կամ սկզբունքների իմացություն կամ տիրապետում), վերաբերմունքի և փորձի տրամադրում և ձեռքբերում: [Օքսֆորդի անգլերենի համառոտ բառարան]:

**B.4.**

**Պատերազմի պայթուցիկ մնացորդներ (ՊՊՄ)**

Չպայթեցված զինամթերք (ՉՁ) և Լքված պայթուցիկ զինամթերք (ԼՊՁ): (ՄՈԶ արձանագրություն V):

**B.5.**

**ԱԳՏԿՀ**

**Ականազերծման գործողությունների տեղեկատվության կառավարման համակարգ (ԱԳՏԿՀ)**

Նշում՝ Սա ՄԱԿ կողմից օժանդակվող դաշտային ծրագրերի կարևոր տվյալների կառավարման համար ՄԱԿ կողմից նախընտրելի տեղեկատվական համակարգն է: Դաշտային մոդուլը (ԴՄ) թույլ է տալիս իրականացնել տվյալների հավաքագրում, տեղեկատվության վերլուծություն և ծրագրի կառավարում: Այն օգտագործվում է ազգային և տարածքային մակարդակներով ԱԳՄԿ անձնակազմի և ականազերծման ծրագրերի իրականացողների կողմից, ինչպիսիք են ականազերծող կազմակերպությունները:

**B.6.**

**Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչներ (ՀԱԳՄՉ)**

Միջազգային հանրության անունից ՄԱԿ կողմից մշակված փաստաթուղթ, որը նպատակ է հետապնդում բարելավել ականազերծման գործողությունների անվտանգությունը և արդյունավետությունը՝ մշակելով սկզբունքներ և որոշ դեպքերում սահմանելով միջազգային պահանջները և հատկորոշումները:

Նշում՝ Նրանք ներկայացնում են հղումների կառուցվածքը, որը խթանում է, և որոշ դեպքերում պահանջում է ականազերծման ծրագրերի հովանավորներից և կառավարիչներից ապահովել և ցուցաբերել արդյունավետության և անվտանգության համաձայնեցված մակարդակները:

Նշում՝ Նրանք առաջարկում են ընդհանուր լեզու և տվյալների հետ աշխատանքի ձևերը և կանոնները, որոնք հնարավորություն են տալիս իրականացնել կարևոր տեղեկատվության ազատ փոխանակումը: Տեղեկատվության այս փոխանակումը նպաստում է այլ ծրագրերին և նախագծերին և օժանդակում է ռեսուրսների ներգրավմանը, գերակայությունների սահմանմանը և կառավարմանը:

**B.7.**

**Ական**

Զինամթերք, որը նախատեսված է հողի կամ այլ մակերևույթի տակ, վրա կամ մոտ տեղադրվելու և անձի կամ մեքենայի ներկայությունից, մոտ գտնվելուց կամ նրանց հետ շփումից պայթելու նպատակով [MBT]:

**B.8.**

**Ականազերծման գործողություն**

Միջոցառումներ, որոնք ուղղված են ականների և ՊՊՄ-ների սոցիալական, տնտեսական և շրջակա միջավայրի հետ կապված ազդեցությունների նվազեցմանը:

Նշում՝ Ականազերծման գործողությունը չի վերաբերվում միայն ականների հեռացմանը, այլ ուղղված է նաև մարդկանց և հասարակություններին և ականների ու ՊՊՄ-ների կողմից նրանց վրա ունեցած ազդեցությանը: Ականազերծման գործողության նպատակն է նվազեցնել ականների և ՊՊՄ-ների ներկայացրած ռիսկը մինչ այնպիսի մակարդակ, որի դեպքում մարդիկ կկարողական անվտանգ ապրել, իսկ տնտեսական, սոցիալական և առողջապահական ոլորտների զարգացումը կարող է զերծ լինել ականների և ՊՊՄ-ների կողմից առաջացրած սահմանափակումներից, և հնարավոր կլինի հոգալ տուժածների կարիքները: Ականազերծման գործողությունը ներառում է միմյանց փոխլրացնող գործողությունների հինգ խմբեր.

- ա) ԱՎԻ,
- բ) մարդասիրական ականազերծում, այսինքն ականների և ՊՊՄ-ների հետազոտում, քարտեզագրում, նշագծում և վնասազերծում,
- գ) տուժածների օգնություն, ներառյալ վերականգնումը և վերաինտեգրումը,
- դ) պահուստային զինամթերքի ոչնչացումը,
- ե) հակահետևակային ականների օգտագործման դեմ քարոզարշավները:

Նշում՝ Ականազերծման գործողությունների այս հինգ բաղադրիչներին օժանդակելու նպատակով անհրաժեշտ են մի շարք այլ միջոցառումներ, ներառյալ՝ գնահատումը և պլանավորումը, ռեսուրսների ներգրավումը և գերակայությունների որոշումը, տեղեկատվության կառավարումը, մարդկային ունակությունների զարգացումը և կառավարման թեմաներով կրթումը, ՈԿ և արդյունավետ, պատշաճ և անվտանգ սարքավորումների կիրառումը:

**B.9.**

**Ականների ռիսկի մասին կրթում**

Տես Ականների վտանգի մասին իրազեկում (ԱՎԻ):

**B.10.**

**Ականների վտանգի մասին իրազեկում (ԱՎԻ)**

Միջոցառումներ, որոնք նպատակ են հետապնդում նվազեցնել ականների/ՊՊՄ-ների պատճառով առաջացած վնասները՝ բարելավելով իրազեկության մակարդակը և խթանելով վարքագծի փոփոխությունը, ներառյալ հանրության համար տեղեկատվության տարածումը, կրթումը և վերապատրաստումը և ականազերծման գործողությունների վերաբերյալ հանրության հետ հաղորդակցումը:

**B.11.**

**Ականների ռիսկի նվազեցում**

Գործողություններ, որոն նվազեցնում են անձանց, սեփականությանը կամ շրջակա միջավայրին հասցված վնասի հավանականությունը և/կամ ուժգնությունը: [Հարմարեցված է ISO Ուղեցույց 51:1999(E)-ից] Ականների ռիսկի նվազեցումը կարող է իրականացվել այնպիսի ֆիզիկական միջոցառումների միջոցով, ինչպիսիք են վնասազերծումը, ցանկապատումը կամ նշագծումը, կամ ԱՎԻ միջոցով խթանված վարքագծի փոփոխության միջոցով:

**B.12.**

**ԱՎԻ կազմակերպություն**

Ցանկացած կազմակերպություն, ներառյալ պետական, հասարակական կամ քաղաքացիական կազմակերպություններ (օր.՝ կանանց միավորումներ, երիտասարդական կազմակերպությունները, կարմիր խաչի կամ կարմիր մահիկի կազմակերպությունները), առևտրային միավորումներ և ռազմական խմբեր (ներառյալ խաղաղություն պաշտպանող ուժեր), որոնք պատասխանատու են ԱՎԻ ծրագրերի կամ առաջադրանքների իրականացման համար: ԱՎԻ կազմակերպությունը կարող է հանդես գալ որպես հիմնական կապալառու, ենթակապալառու, խորհրդատու կամ գործակալ: 'ԱՎԻ ստորաբաժանում' տերմինը վերաբերում է կազմակերպության առանձին անվանում ունեցող մի բաղադրիչին, որը հավաստագրված է մեկ կամ մի քանի հանձնարարված ԱՎԻ միջոցառումներ իրականացնելու համար, ինչպիսիք են հանրային տեղեկատվության տարածման ծրագրի, դպրոցներում իրականացվող կրթման ծրագրի կամ հակաականային գործողությունների վերաբերյալ համայնքների հետ հաղորդակցման ծրագրերի գնահատումը:

**B.13.**

**ԱՎԻ գործընկեր**

Ականներ ունեցող համայնքի ներսում մի հաստատություն կամ գործակալ, որը կարող է համագործակցել ԱՎԻ կազմակերպության հետ ԱՎԻ ծրագրերին աջակցելու, դրանք մշակելու և իրականացնելու ուղղությամբ:

**B.14.**

**Ականագերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)**

Ականներ ունեցող բոլոր այն երկրների պետական վարչությունները, կազմակերպությունները կամ հաստատությունները, որոնք պարտավոր են կարգավորել, կառավարել և համակարգել ականագերծման գործողությունները:

'Նշում' Շատ դեպքերում ԱԳԱԿ կամ նրան հավասարագոր մարմին կարող է գործել որպես ԱԳԱՄ կամ նրա անունից:

'Նշում' Որոշ իրավիճակներում և որոշակի պահերին ՄԱԿ կամ այլ ճանաչված միջազգային մարմնի համար կարող է անհրաժեշտ և պատշաճ լինել ստանձնել ԱԳԱՄ որոշ կամ բոլոր պարտականությունները և իրականացնել որոշ կամ բոլոր գործառնությունները:

**B.15.**

**Հանրային տեղեկատվության տարածում**

Ականների և ՊՊՄ իրավիճակի վերաբերյալ տեղեկատվություն, որն օգտագործվում է բնակչությանը իրազեկելու կամ նոր տեղեկատվություն տրամադրելու համար: Նման տեղեկատվությունն կարող է կենտրոնանալ կոնկրետ խնդիրների վրա, ինչպիսիք են ականներ արգելող օրենսդրությունը, կամ կարող է օգտագործվել ականագերծման ծրագրերի իրականացման ընթացքում հանրային օժանդակությունը խթանելու նպատակով: Նման ծրագրերը սովորաբար ներառում են ռիսկի նվազեցման հաղորդագրությունները, սակայն կարող են նաև օգտագործվել ականագերծման գործողությունների ազգային քաղաքականությունն արտացոլելու նպատակով:

**B.16.**

**Ռիսկ**

Վնասի միջադեպ տեղի ունենալու հավանականության և այդ վնասի մակարդակի համադրություն: [ISO Ուղենիշ 51:1999(E)]

**B.17.**

**Կենդանի մնացած անձինք (ականառումբերի/ՊՊՄ-ների ազդեցությունից հետո)**

Անհատներ կամ մարդկանց խմբեր, որոնք կրել են ֆիզիկական, զգացմունքային կամ հոգեբանական վնասներ, տնտեսական կորուստներ կամ իրենց հիմնական իրավունքների զգալի ռոտահարում ականների օգտագործման կամ ՊՊՄ-ների առկայության, կիրառման կամ դրանց վերաբերյալ կանոնակարգերի բացթողումների հետևանքով: Ականների/ՊՊՄ-ների ազդեցությունից հետո կենդանի մնացածների կամ տուժածների թվին են դասվում ուղղակիորեն ազդեցության ենթարկված անձինք, նրանց ընտանիքները և ականառումներ ու ՊՊՄ-ներ ունեցող համայնքները:

**B.18.**

**Չպայթած զինամթերք (ՉՁ)**

Պայթուցիկ զինամթերք, որը լիցքավորվել է, ձուլվել/հագեցվել պայթացիչով, զինվել կամ որևէ այլ կերպ նախապատրաստվել օգտագործման համար կամ օգտագործվել: Այն կարող է լինել հրանետված, ցած գցված, տեղադրված կամ նախատեսված, սակայն դեռևս չպայթեցված՝ ձախողման պատճառով, շահագործման կառուցվածքից ելնելով կամ էլ որևէ այլ պատճառով:

**B.19.**

**ՄԱԿ ականազերծման կազմակերպություն (ՄԱԿԱՕ)**

ՄԱԿ կենտրոնական մարմին, որը զբաղվում է ականների հետ կապված բոլոր գործողություններով:

Նշում՝ ՄԱԿԱՕ հանդիսանում է ՄԱԿ քարտուղարության կառուցվածքում գործող գրասենյակ, որը պատասխանատվություն է կրում միջազգային հանրության արջև ՀԱԳՄՉ մշակման և պահպանման համար:

Նշում՝ UNICEF կենտրոնական մարմինն է, որը ՄԱԿԱՕ ընդհանուր համակարգման ուղեցույցների շրջանակներում իրականացնում է ԱԿԻ:

**B.20.**

**Տուժած**

Անձ, որը վնասներ է կրել ականների կամ ՊՊՄ-ների պայթյունների հետևանքով:

Նշում՝ տուժածներին աջակցություն ցուցաբերելու կոնսեքստում տուժած տերմինը կարող է ներառել ականների/ՊՊՄ-ների դժբախտ պատահարների տուժածներից կախվածություն ունեցող անձանց՝ այդպիսով ունենալով առավել լայն իմաստ, քան կենդանի մնացածները:


**B.21.**

**Գյուղերի ականազերծում**

Սովորաբար տեղական բնակչության կողմից, իրենց կամ իրենց անմիջական համայնքի անունից ականների և/կամ ՊՊՄ-ների վնասազերծման և վտանգավոր տարածքների նշագծման ուղղությամբ անկախ իրականացվող աշխատանքներ: Հաճախ ներկայացվելով որպես *անկախ նախաձեռնություն կամ ինքնակամ ականազերծում*՝ գյուղերի վնասազերծումն սովորաբար իրականացվում է ականազերծման գործողությունների պաշտոնական միջոցառումներից անկախ կամ նրանց զուգահեռ, ինչպիսիք են ռազմական ուժերի կողմից կատարվող *ականազերծման գործողությունները* կամ *մարդասիրական ականազերծումը*, որը կարող է օժանդակվել ՄԱԿ, միջազգային կամ ազգային հասարակական կազմակերպությունների, մասնավոր ձեռնարկությունների և կառավարության և այլ աղբյուրների կողմից:



## Հավելված Գ (Տեղեկատվական) ԱՎԻ ցիկլ



## Փոփոխությունների գրանցում

### ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կառավարում

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքը ենթակա է պաշտոնական վերանայման երեք տարին մեկ, սակայն սա չի բացառում այդ երեք տարիների ընթացքում փոփոխությունների կատարումը՝ ելնելով գործառնական անվտանգության և արդյունավետության կամ խմբագրական հանգամանքներից:

Այս ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կատարման դեպքում դրանք համարակալվում են և այդ փոփոխությունների կատարման ամսաթիվն ու ընդհանուր մանրամասները նշվում են ստորև բերված աղյուսակում: Փոփոխությունները նաև պետք է նշվեն ՀԱԳՄՉ-ի առաջին էջում՝ թողարկման ամսաթվի տակ ներառելով «Ներառված են փոփոխություն թիվ 1 և այլն» արտահայտությունը:

Յուրաքանչյուր ՀԱԳՄՉ-ի պաշտոնական վերանայումից հետո կարող են թողարկվել նոր խմբագրությունները: Մինչև նոր հրատարակությունը կատարված փոփոխությունները կընդգրկվեն նոր հրատարակության մեջ և փոփոխությունների աղյուսակը կմաքրվի: Դրանից հետո կրկին կսկսվի փոփոխությունների գրանցումը, մինչև նոր վերանայում իրականացվի:

ՀԱԳՄՉ-ի ամենավերջին փոփոխություններն այն տարբերակներն են, որոնք տեղադրվում են ՀԱԳՄՉ-ի կայքէջում՝ [www.mineactionstandards.org](http://www.mineactionstandards.org):

Թիվ	Ամսաթիվ	Փոփոխության մանրամասներ
1	Դեկտեմբերի 1, 2004թ.	1. Ձևաչափի փոփոխություններ: 2. Տեքստի աննշան խմբագրական փոփոխություններ: 3. Որտեղ անհրաժեշտ է տերմինների, սահմանումների և հապավումների փոփոխություններ՝ ՀԱԳՄՉ 04.10-ի հետ սույն ՀԱԳՄՉ համապատասխանությունն ապահովելու նպատակով:
2	Հուլիսի 23, 2005թ.	1. Հավելված Բ-ում՝ Ականների ռիսկի վերաբերյալ կրթման (ԱՎԲ)՝ սահմանման փոփոխություն՝ ՀԱԳՄՉ 04.10-ին համապատասխանելու նպատակով:
3	Օգոստոսի 1, 2006թ.	1. Նախաբանի առաջին և երկրորդ պարբերությունների աննշան փոփոխություններ/լրացումներ: 2. “Ականներ և ՊՊՄ” տերմինի ներառում: 3. Ամբողջ ՀԱԳՄՉ-ից՝ ‘սպառնալիք’ տերմինի հեռացում: 4. Կետ 6.3-ում նոր երրորդ պարբերության ավելացում: